



## «ԱՅԺԱ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

### Ջ. Ա. ԲԱՌԱՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի բարբառագիտության բաժինը գրեթե քառորդ դար առաջ ձեռնարկեց մի շատ կարևոր ու պատասխանատու գործ հայերենի բարբառագիտական ատլասի կազմումը (այսուհետև՝ ԲԱ): Այդ տիտանական աշխատանքն իրականացնելու համար կազմվեց ծրագիր, որն անվանվեց «Բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր» (Երևան, 1977 թ.): Ծրագիրն ընդգրկում է հայ բարբառներն իրարից տարբերող բառային, քերականական ու հնչյունական հատկանիշներ:

Ծրագրի առաջին բաժինը կազմում են բառային զուգաբանությունները, որոնց հիմքում ընկած են տվյալ հասկացության դիմաց տարբեր վայրերում հանդես եկող զուգաբանությունները: Երկու տասնամյակի ընթացքում հավաքչական աշխատանքների շնորհիվ կուտակված հարուստ նյութը հնարավորություն է տալիս բազմակողմանի ուսումնասիրություններ կատարել: Կարելի է դիտարկել իմաստային որոշակի խմբեր, կարելի է զբաղվել մեկ առանձին վերցրած հասկացության զուգաբանությունների քննարկմամբ: Իմաստային շատ հետաքրքիր խումբ են կազմում ժամանականիշ հասկացությունները:

«ԲԱ նյութերի հավաքման ծրագրի» 1-ին բաժնում, որն ընդգրկում է հասկացական-բառանվանողական զուգաբանությունները, 275, 276, 277, 278, 450, 451, 452, 466, 471, 476 կետերը նվիրված են ժամանականիշ անուններին ու մակբայներին: Դրանց դիմաց գրանցված զուգաբանությունները շատ հետաքրքիր պատկեր են ներկայացնում:

Դիտարկենք «Ծրագրի» 450-րդ բառահոդվածն արտահայտող «ԱՅԺԱ» հասկացության բառանվանումները հայերենի խոսվածքներում:

Մինչև այժմ գրանցված 500-ից ավելի խոսվածքներից և ոչ մեկում այժմ բառածևը գրանցված չէ:

Գրաբարյան «այժմ» բառը, որ բազմիցս կիրառվել է մատենագրության մեջ տարբեր ածանցումներով, բառաբարդումներով (առ այժմ, այժմեն, այժմեան, այժմածին, այժմու, ցայժմ...), Աճառյանը ստուգաբանում է այս + ժամ ձևով, որ հաճախակի գործածության և շեշտը 1-ին վանկի վրա լինելու պատճառով կորցրել է երկրորդ բաղադրիչի ա ձայնավորը (շեշտից կախված հնչյունափոխություն) և առաջին բաղադրիչի ս բաղաձայնը, որովհետև երկու շփական բաղաձայնների հարևանությունը արտասանական բարդություն է ստեղծում: Պահպանվել է ժ-ն, որովհետև բարդ բառի հիմնական բաղադրիչի վրա է ժանրացած բառիմաստը (ժամ)<sup>1</sup>:

Գրաբարում հաճախադեպ կիրառություն ունեցող այս բառը հետագայում դուրս է մղվել կենդանի խոսակցական լեզվից և հայտնվել է միայն գրական արևելահայերենում: Հաստատապես կարելի է ասել, որ արևելահայ գրական լեզվին անցած «այժմ» ձևը ուղիղ զծով սերում է գրաբարից: Լույսիսկ կարելի է պնդել, որ այս կցական բարդությունը մտածված բառակազմության արդյունք չէ և կազմվել է խոսողության գործընթացում:

Ատլասի համար հավաքված զուգաբանությունների մեջ չգտնելով այս ձևը՝ դիմեցինք նաև «Հայ ժողովրդական հեքիաթների» մատուցած նյութերին: Բայց «Այժմ» բառն իր բուն նշանակությամբ բացակայում է հայերենի խոսվածքներում: Առաջին հայացքից մեր ասածին հակառակ փաստ է թվում Թիֆլիսի խոսվածքում առկա «իժում» ձևը և Սուչավայի «ամժոմ», «անժում» ձևերը, բայց դրանք իմաստով չեն համապատասխանում այժմ-ին: Թիֆլիսի խոսվածքում առկա «իժում» ձևը նշանակում է «այնուհետև», «դրանից հետո» և համապատասխանաբար գրանցված է

<sup>1</sup> Տե՛ս Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Երևան, 1971:

«Ծրագրի» 467-րդ բառահոգվածի դիմաց, որն արտահայտում է «Այնուհետև» հասկացության զուգաբանությունները: Իսկ Աճառյանի գրանցած Սուչավայի բարբառում առկա «անժըմ» ձևն անկասկած առաջացել է այն+ժամ ձևով և չի կարող այժմ (այս+ժամ) բառի իմաստն արտահայտել: Միջին հայերենի նշանավոր հուշարձաններից մեկում՝ Ամիրդովլաթ Ամասիացու աշխատության մեջ<sup>2</sup>, անժմու ձևն ունի ոչ ժամանակին, անժամանակ իմաստը:

«Այժմ» հասկացության դիմաց հայերենի խոսվածքներում արձանագրված ձևերի համեմատությունից պարզ է դառնում, որ գրեթե համահայերենյան կիրառություն է ունեցել և ունի «հիմա» ձևը՝ իր բազմաթիվ ձևափոխված, հնչյունափոխված տարբերակներով: Հայերենի խոսվածքներից յուրաքանչյուրում տվյալ տարածքին հատուկ հնչյունափոխություն կրելով՝ այն ամբողջովին ընդգրկում է «այժմ» բառի արտահայտած իմաստը:

Արևմտահայ գրական լեզվում նույնպես ընդունված է հիմա ձևը:

Ակնի, Պոլսո և արևմտյան խմբակցության շատ խոսվածքներում գրանցված են հիմագ, հըմագ ձևերը:

Կարնո խոսվածքում առկա է հիմիգ զուգաբանությունը:

Աշխարհագրական ընդարձակ տարածք են ընդգրկում (և՛ արևմտյան, և՛ արևելյան խըմբակցության բարբառներ) կ-ի անկումով առաջացած ձևերը.

Երևան և շրջակայք - հըմի

Թիֆլիս - հիմա

Ջավախք - հիմի, հայմի

Մալաթիա - հըմմա

Յաճընի, Ավեդիայի խոսվածքներում առկա հումմո և համո ձևերը օրինաչափ հնչյունափոխության արդյունք են: Քեսաբում առկա է հեմ նախածնը՝ հեմու:

Այս նախածները փաստում են, որ վերոհիշյալ զուգաբանությունները ակ՝ ածանցով կազմված բառեր են: Այս փաստարկի օգտին են խոսում Ակնա խոսվածքին հատուկ «հիմայեգ>հիմայեգուզս» զուգաբանությունը, որ նվազականի կրկնահավելումով առաջացած ձև է:

Ածանցն անջատելով՝ ունենում ենք հեմ կամ հեմ (ե>ի հնչյունափոխությունը գրանցված ձևերուս առկա է):

Գրաբարյան արդյունքներով ավանդված և բարբառների գերակշիռ մասում գրանցված ձևերը հանգում են հեմ նախածնին:

Հիմա(կ)-ի փոփոխության արդյունք են նաև հըմկա, մըկա, մըզը... զուգաբանությունները, որ գրանցվել են մեծ տարածք ընդգրկող խոսվածքներում՝ Մուշ, Սասուն, Ալաշկերտ, Մանազկերտ, Վան, Շատախ, Բաղեշ, Խոյ, Բայազետ, պարսկահայ խոսվածքներ և այլն:

Սակայն հայերենի խոսվածքներում ժամանականիշ բառերի դիմաց առկա զուգաբանությունները դիտարկելիս նկատել ենք մի հետաքրքիր օրինաչափություն, որ թույլ է տալիս վերոհիշյալ հըմկա - մըկա - մըզը ձևերին այլ բացատրություն տալ: Վերոհիշյալ ձևերը գործառու են հիմնականում այն տարածքներում, ուր ժամանակ հասկացության դիմաց առկա են գաի, գախ, կախ, գախ, գախ զուգաբանությունները, որ փոխառյալ ձևեր են նոր պարսկերենից:

Կարելի է կարծել, որ «այս ժամին» հասկացությունն արտահայտող «այժմ» ժամանականիշ մակբայի իմաստի ողջ կոնկրետությունն ընդգրկելու համար են ստեղծվել հիմա + գաի>հիմգա, հըմգա, հըմկա, մըկա, մըզը... ձևերը:

Այս բացատրության օգտին է խոսում Խուբի Թաղվու գյուղի խոսվածքում գրանցված «հըմիգա» ձևը:

Այն, որ բառի երկրորդ բաղադրիչը գաի (ժամ, ժամանակ) արմատն է, փաստում է նաև մեր կողմից Մշո Սկրագոմ գյուղի խոսվածքում գրանցված հ'իտկա զուգաբանությունը՝ հիմա, հենց այս պահին նշանակությամբ: Անկասկած այն առաջացել է իդա ցուցական դերանվան և գաի-ի միացումից՝ արտահայտելով այս ժամին, այս ժամանակ իմաստը:

Եւթնը, որ Մշո բարբառում այս, այդ, այն ցուցական դերանունների եռանդանության դիմաց առկա է երկանդամություն (իդա նշանակում է և՛ այս, և՛ այդ): Այս հիտկա ձևը համարել ենք մի առանձին ձև՝ «այժմ» բառի կաղապարով առաջացած:

Ինչպես նշեցինք, հեմ արմատից ծագած ձևերը համահայերենյան են:

Միջին հայերենում վկայված ձևերը ավելի հաճախ -իկ ածանցի օգտին են խոսում (հիմի(կ)>հիմի):

Այդ հիմա(կ)-ի կամ հիմի(կ)-ի անցումային հաջորդ օղակը հ-մ հնչյունների դրափոխությամբ ստացված ձևերն են՝ հիմի(կ)>հըմի(կ)>մըիկ, մըիկ, մըիկնգ և այլն, որ գործառու են արևելյան խմբակցության որոշ խոսվածքներում (Ղարաբաղ, Ղարադաղ, Գորիս):

<sup>2</sup> Տես Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկության, Երևան, 1940:

Չեմ արմատից առաջացած ձևերից բացի «ԱՅԺՄ» հասկացության դիմաց գրանցվել են նաև այլ կարգի զուգաբանություններ: Ցղնայի, Ազուլիսի, Մևրիի, Կարճևանի խոսվածքներում գրանցված հարդա, հըրդա, հարդա, հըրդօ ձևերը միանգամայն այլ ծագումնաբանական խումբ են կազմում:

եղ. Աղայանը<sup>3</sup> այդ հըրդա ձևը համարում է համապատասխան հնչյունափոխությամբ հրեդիկ ձևից առաջացած (կ-ի անկմամբ և բառավերջի ի հնչյունի և հնչյունափոխությամբ):

Մեծարգո գիտնականը գրաբարյան ահավասիկ>ահավադիկ>հրեդիկ ձևից է բխեցնում խոսվածքում առկա հրդա ժամանակամիջը՝ «այժմ» նշանակությամբ: Բայց մենք սրա կողքին առաջարկում ենք նաև մի այլ վարկած:

Առկա է հնդեվրոպական արդ արմատը՝ «հիմա», այս պահին նշանակությամբ: Միանգամայն հնարավոր ենք համարում սահմանափակ տարածքում այդ ձևի հնչյունափոխված տարբերակների առկայությունը, քանզի այդ կարծիքին են մղում մեզ շրջակա խոսվածքներում գրանցված ձևերը:

Գիտարկենք Կարճևանի բարբառում առկա հանրյան զուգաբանությունը և աշխատենք հանգել արդ նախաձևին:

1) Ըստ բարբառում գործող հնչյունական օրենքների՝ հին հայերենի ա-ն երկվանկ բառերի սկզբում շեշտի տակ դարձել է ն, եթե այդ ձայնավորին հաջորդել է ւ, ն, ո, ւ ձայնորդներից որևէ մեկը:

2) Բառավերջի ի>ա հնչյունափոխությունն այս բարբառում էլ է գործում: Ուստի օրինաչափ է ի>ա անցումը (արդի>արդա>հանրյան):

3) Բառասկզբի ձայնավորից առաջ հ-ի հավելումը այս բարբառում օրինաչափ է:

Նյութը շատ չժամրաբեռնելու համար չենք բերում նշված կետերը հաստատող փաստեր, որ քաղել ենք գրանցված խոսվածքների հնչյունական օրինաչափություններն արտահայտող բաժնից:

Ցղնայի բարբառում առկա հըրդօ ձևը ժամանակագրական առումով ավելի նոր երևույթ է: Արդի և հըրդօ ձևերի միջև ի-օ անցումն ունեցել է անցումային օղակ (ի - ն - օ): Հաշվի առնելով Ցղնայի և Ազուլիսի խոսվածքներում առկա հնչյունական օրենքը, թե շեշտի տակ ա ձայնավորը փոխվում է օ-ի (ն>օ), կարող ենք եզրակացնել, որ Կարճևանի բարբառի հանրյան ձևի հետագա փոփոխության արդյունք է Ցղնայի, Ազուլիսի խոսվածքներում առկա հըրդօ զուգաբանությունը:

Եթե հանրյան և հըրդօ ձևերի ծագումը արդի (արդ) նախաձևից հնարավոր, և օրինաչափ ենք համարում, ապա Մևրիի խոսվածքում առկա հարդա զուգաբանությունը շատ ավելի ակնառու ձևով է վկայում այդ մասին (հ-ի հավելումն ու ի>ա անցումը միանգամայն օրինաչափ է այդ խոսվածքի համար):

Մեր ասածի օգտին է խոսում այն, որ վերոհիշյալ ձևերից յուրաքանչյուրը մյուսի անցումային օղակն է՝ արդի>հարդա>հանրյան>հըրդային>հըրդօ...

«Այժմ» հասկացության դիմաց հայերենի շատ խոսվածքներում գրանցվել են մեկից ավելի զուգաբանություններ, սակայն չի կարելի ասել, թե այս հասկացությունը հոմանիշային առատություն է հանդես բերում: Պատճառն այն է, որ այժմ հասկացությունն ընդգրկում է կոնկրետ ժամանակահատված: Նույնը չի կարելի ասել այլ ժամանակամիջների մասին խոսելիս, որոնք խիստ ուրոշակիություն չունեն («ժամանակ», «առավոտ», «կեսօր», «իրիկնապահ», «վաղը»): Այդ կոնկրետության պակասն է պատճառը, որ տվյալ հասկացությունների դիմաց գործառում են բազմաթիվ զուգաբանություններ:

«Այժմ» հասկացության դիմաց որոշ խոսվածքներում առկա են նաև օտար, փոխառյալ ձևեր:

Որոշություն կիրառվել է աս սահաթին<այս սահաթին (այս ժամին) զուգաբանությունը, որում առկա ցուցական դերանունը որոշակի է դարձնում հենց այս պահին գործողության կատարման հանգամանքը՝ միանալով թուրքերեն սահաթ (ժամ) ձևին:

Խանլարի խոսվածքում գրանցվել է սայիս ձևը, որ ծագում է դարձյալ թուրքերեն սահաթից՝ արագախոսության պատճառով կրած փոփոխությամբ և ս հոդով (սահաթիս>սայիս): Այս խոսվածքում գրանցվել են նաև հեժ արմատից ծագած զուգաբանություններ՝ մըիղէ, մըիղէկ, որոնք, ինչպես նշեցինք, հիմն(կ), հիմի(կ) ձևերից են առաջացել դրափոխությամբ:

Համեմատելով «այժմ» հասկացության դիմաց հայերենի խոսվածքներում արձանագրված ձևերը՝ կարող ենք կատարել այսպիսի խմբավորում.

<sup>3</sup> Տե՛ս եղ. Աղայան, *Մեղրիի բարբառը, Երևան, 1954*։

1) հեն արմատով կազմված ձևեր, որոնք ենթարկվել են յուրաքանչյուր խոսվածքին հատուկ հնչյունափոխության:

2) Հնդեվրոպական արդ>արդի ձևից ծագած զուգաբանություններ, որ գործառում են շատ սահմանափակ տարածք ընդգրկող խոսվածքներում (Սևրի, Ցղնա, Կարճևան):

3) «Այժմ» բառի կաղապարով ստեղծված ձևեր, որոնցում առաջին բաղադրիչը ցուցական դեիանունն է, երկրորդը՝ ժամ, ժամանակ հասկացությունն արտահայտող ձևը (զահ, առն):

4) Փոխառյալ ձևեր, որոնք կողքին անպայմանորեն առկա են նաև հեն արմատից սերող ձևեր:

Ի տարբերություն մնացած ժամանականիշ հասկացությունների, «այժմ»-ը զուգաբանությունների առատությամբ աչքի չի ընկնում, որովհետև մատնանշում է խիստ որոշակի ժամանակահատված:

Օգտագործելով ըստ «Բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» կուտակված հարուստ նյութը, բարբառագիտական աշխատություններից քաղված փաստերը, «Պայ ժողովրդական հեքիաթների» բազմախատոր հրատարակություններից ընտրված նյութը կարող ենք քարտեզագրման մի փոքրիկ փորձ կատարել և նախնական մի քարտեզով ներկայացնել «ԱՅժՄ» հասկացության զուգաբանությունները հայերենի խոսվածքներում հիմք ընդունելով վերոհիշյալ խմբավորումը և յուրաքանչյուր խումբ քարտեզի վրա արտահայտելով մի պայմանական նշանով:

«Այժմ» հասկացության զուգաբանությունների պատկերը ներկայացնում ենք հավելվածի ձևով.

**Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ց**

Հիմա (հեմու, համո, հըմա...) - Զեսար, Ավեդիա, Չաճն, Խարբերդ, Ակն, Սալափա, Շապին-Գարահիսար


հիմի (հըմի, հըմիգ) - Երևան և շրջակայք, Բասեն, Հին Ջուրա, Իջևան, Համշեն, Սուրմալու, Իզդիր, Սպահան, Ջավախք (Կարին)

մըկա, մըզա (հըմկա, հ'իտկա) - Աստուն, Սուշ, Բաղեշ, Խոյ, Բայազետ, Արծկե, Վան, Բերկրի, Մակու, Մարաղա

մըհիկ, մըհեճգ, (մըդգ, միհեճգ) - Ղարաբաղ, Մարտակերտ, Հաղուբ, Խանլար, Ասկերան և այլն, Գորիս, Ղարաղաղ

հարդա (հըրդա, հըրդօ) - Սևրի, Կարճևան, Տանակերտ

*Քարտեզի վրա արտահայտենք «ԱՅժՄ» հասկացության զուգաբանությունները՝ յուրաքանչյուր արմատական խմբի համար օգտագործելով առանձին պայմանական նշան.*



Дж. А. Барнасян - Слова, выражающие понятие «ныне» (այժմ) в говорах армянского языка. - 450-я словарная статья "Программы сбора материалов диалектологического атласа армянского языка" относится к понятию այժմ (ныне, сейчас). Грабаровская словоформа այժմ совершенно не встречается в более чем 450 - и записанных говорах. Выступающие вместо нее формы по происхождению можно сгруппировать следующим образом:

1. Наиболее распространенными являются формы, образованные корнем հտձ, которые были подвергнуты разного рода чередованиям. Встречающиеся հիձսկ, հիձիկ, հրձիզ, հրձի, հրձիզս, հիձսյ и др. полностью выражают основной смысл слова այժմ ("в сей час" "в сие мгновение").

Результатом изменения формы հիձս(կ) являются также հրձկա, ըրկա, ըրզը и подформы, которые встречаются в большей части западноармянских говоров.

Следующее переходное звено формы հիձս(կ) словоформы, образованные метатезой звуков h-ձ: Արհէկ, ըրհէզ, ըրհէզս и тд.

2. Другая группа обозначений понятия այժմ - формы, образованные унаследованным из индо-европейского праязыка корнем шрп, которые имеются в некоторых восточноармянских говорах: հարրա, հրրրա, հրրրո и др.

3. В говорах диалекта Муша встречаются формы հրրզա, հիիկա и др., которые образованы по модели слова այժմ «իդш» "этот"+ заимствованный перс. корень qш(h) "час").